

ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ (ՈՒՐՎԱԿԻՄ)

Բարբառների ուսումնասիրությունը, հատկապես նրանց նկարագրությունը ղյուրացնելու համար, ուրեմն՝ մեթոդաբանական նկատառումներով, դրաբարի բաղաձայնների վիճակը ընդունված է որպես ստատիկ վիճակ: Հասկանալի է, որ այդ մեթոդը չի ժխտում հնչյունափոխության գոյությունը գրաբարում, քանի որ գրաբարը հայերենի զարգացման փուլերից մեկն էր, կենդանի ու փոփոխության ենթակա:

Գրաբարն ուներ բաղաձայնների երեք խումբ՝ պայթականների, շփականների ու ձայնորդների. պայթականները բաղկացած էին երեք շարքից՝ ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ, իսկ շփականները՝ երկու՝ ձայնեղ և խուլ:

Բարբառների մոծած նորությունը շնչեղ ձայնեղ պայթականների խումբն է, ձայնեղ շփական դ-ն՝ կատկային 1 ձայնորդի փոխարեն և խուլ շփական ֆ-ն: Քիչ բարբառներ կան, որոնք բաղաձայնների գրաբարյան շարքերը սովորաբար պահում են անփոփոխ, իսկ ընդհանրապես անփոփոխ են պահվում ձայնեղ և խուլ շփականները, ապա՝ ձայնորդները և շնչեղ խուլ պայթականները. ամենից շատ փոխվում են ձայնեղ և խուլ պայթականները:

Գրաբարյան ձայնեղ պայթականները սովորաբար ձայնեղ են մնում մի քանի բարբառներում՝ Ղրդ¹. Մղր. Կրճ. Ազլ. Արշ. Կռ. Թբլ. Արթվ. Նխշ. Կս. Մրշ. Պլ., իսկ ընդհանրապես՝ բոլոր բարբառներում, միայն բառակազմի կից ռեզայինից հետո, բնաձայնական և ուշ շրջանում փոխառնված թուրքական բառերում: Բարբառների մի ուրիշ խմբում՝ Նջ. Ոզմ, Բյզ. Երև. Կր. Ալշ. Մշ. Հզզ. Խտրշ., միայն բառասկզբում, նրանք դառնում են շատ հստակ արտասանված շնչեղ ձայնեղ: Այս նույն դեպքում բարբառների երրորդ խմբում՝ Ջլթ. Շպզր. Ակն. Բլ. Խրբ. Արբ. Ջթ. Հճ. Սվ. Սբ. Առտ. ձայնեղները դառնում են երկդիմի հնչման:

Բարբառների շորրորդ խմբում՝ Մրղ. Սլմ. Ուրմ. Շտ. Մկ. Վն. Սս. Երև. Գր. Ղրբ. Հզր. Շմ. Գնձ. Շմշ. Դրս. Սլ. նրանք դառնում են խուլ: Այս խուլ հնչումը գտնում ենք համարյա բոլոր բարբառներում՝ կից խուլ շփականների մոտ, իսկ բարբառների մի ուրիշ խմբում՝ Տա. Եզ. Սիրվ. Օրտու, Թոտ. ձայնեղ պայթականները դառնում են շնչեղ խուլ. այս փոփոխությունը ր-ից հետո և ուշ շրջանի գրական բառերում գիտեն բոլոր բարբառները՝ բացառությամբ առաջին խմբի բարբառներից, որոնք դեռ տատանվում են ձայնեղի ու շնչեղ խուլի գործածությամբ:

Խուլ պայթականները անփոփոխ են մնում առաջին խմբի «արևելյան» բարբառներում՝ Ղրդ. Մրղ. Կրճ. Ազլ. Արշ. Կռ. Թբլ. Արթվ. և երկրորդ ու շորրորդ խմբի բարբառներում, իսկ մյուսներում սովորաբար դառնում են ձայ-

1 Հապավումների բանալին տե՛ս նոդվածի վերջում:

նեղ: Ձայնեղ հնչումը գտնում ենք սովորաբար ռնգայինից հետո նաև այն բարբառներում, որոնք խուլերը պահում են անփոփոխ:

Այս խմբի մի քանի բարբառներում՝ Շմ. Ծրև. և այլն, ուշ շրջանի գրական բառերում և դրանց հետևողությամբ ընդհանուր հայերենի սովորական գործածության որոշ բառերում, հատկապես բառամիջում ու բառավերջում, խուլերը անկանոն կերպով դառնում են ձայնեղ. Կարինի և մի քանի այլ բարբառներում խուլերը ձայնեղ են դառնում սովորաբար ձայնորդից հետո:

Միակ շեղումը կատարում է Հաղղոյի բարբառը, որը շնայած բառամիջում ու բառավերջում համընթաց է խուլերը ձայնեղ դարձնող բարբառներին, բայց բառասկզբում ավելի առաջ մղելով ձայնեղացումը, խուլերը դարձնում է շնչեղ՝ ձայնեղ պ>բ>բ':

Շնչեղ խուլ պայթականները ամենուրեք սովորաբար մնում են անփոփոխ, միայն մի քանի տեղ՝ Մոտական, Ալշ. Մշ. Հմշ., բառամիջում ու բառավերջում, թե կախյալ և թե անկախ պայմաններում դառնում են խուլ:

Գրաբարյան եռաշարք պայթականների վերաբերյալ նշված փոփոխությունները միօրինակ ու հավասարապես հետևողականորեն չեն տարածված տարբեր խմբերի մեջ մտնող բարբառներում, այսպես, օրինակ՝ պայթականների երեք շարքը սովորաբար անփոփոխ պահող բարբառներից ամենից հետևողականը Ագուլիսն է, իսկ այդ խմբի Թբիլիսիի բարբառը բառակազմի երբ դարձնում է բփ, իսկ բառամիջի ու բառավերջի խուլերը հաճախ դարձնում է ձայնեղ:

Բարբառների ներկայացրած այս և նման տարբերությունները, այլ խոսքով՝ թե ինչու որոշ բարբառներ համարյա անփոփոխ են պահել «հին հայերենի ձայնական հարստությունը»³, ուրիշները որոշ չափով փոփոխել են այն, իսկ երրորդները բավականաչափ հեռացել նրանից, մինչև օրս վերջնական բացատրություն չեն ստացել:

Որոշ հայագետներ գտնում են, որ գրաբարի համեմատությամբ բարբառների ներկայացրած պայթականների տարբեր շարքերը ուղիղ գծով ժառանգություն են նախահայերենի շրջանից⁴: Այդ կարծիքը հաստատելու համար կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, սակայն մենք նշում ենք միայն մեկը՝ պղպջակ բառի զուգաձևերը՝ bol-, bhel- և phel-. bol- ձևը գիտեն հունարենը, լատիներենը, սանսկրիտերենը, bhel- ռուսերենը, հունարենը, phel- անգլերենը:

2 Այս կապակցությամբ Հ. Աճառյանը («Հայ բարբառագիտություն», էջ 160) գրում է. «Հաղղոյի և թարաբրառին մեջ կը գտնենք թրթռուն շնչավորներու խումբը՝ Մշո բարբառին նման, բայց հոս ձայնական օրենքները քիչ մը առաջ երթալով ձայներն ալ կը վերածեն թրթռուն շնչավոր, ինչ. զ'աննալ՝ կանգնեցալ, զ'նիկ՝ կնիկ, զ'նխ՝ տեղ, զ'ուզեռ՝ կուզերս: նմուշների բաժնում (էջ 161) տողատակի ծանոթագրությունից երևում է, որ Հաղղուն ունի եռաստիճան համակարգ՝ զ՝ զ'. կ>զ> բ>բ'.

Սրանից չի հետևում, թե հեղինակը հակասություն մեջ է, որովհետև զ>զ', ինչպես Մուշում. կ>զ՝ բառամիջում ու բառավերջում, իսկ բառասկզբում կ>զ>զ՝ վերջ նշված զ'նիկ վրիպակով է, պետք է լինի զ'նիկ: խուլերի շնչեղ ձայնեղացումը Հ. Աճառյանը նկատել է նաև Զեյթունի բարբառում (Յաղությանենց թաղ), բայց ի՞նչ պայմաններում՝ բառասկզբում, ինչպես Հաղղոյում է. թե ընդհանրապես, հեղինակը չի նշում (Հ. Աճառյան, «Հայ բարբառագիտություն», էջ 206, տողատակի ծան. 1).

3 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 36:

4 Հմմտ. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, 1933, էջ 136 և այլն:

նը, միջին գերմաներենը: Գրաբարում գտնում ենք բղբջակ, բողբոջ, բող, բողկ և պղպջակ, ինչպես նաև վղվջանալ, որոնք բոլորն էլ ներկայացնում են հիշյալ հնիւ. ձևերը:

Բարբառներն էլ վեր են հանում բողբունջ, բխբուն, պղպուն, պխպնալ, վխպուն և ձևերը. սրանք բոլորն էլ միանում են գրաբարին և կազմում հնիւ. ձևերի շարունակությունը: Ինչպես երևում է, ուրիշ կերպ չի կարելի մտածել և հայագետների կարծիքը անառարկելի է: Այդ կարծիքն է հաստատում նաև ձև երկրաբարուի է փոփոխությունը, որը օրինաչափ է ֆրանսերենում, հունարենում, կար գրաբարում և տարածված է մեր բարբառներից շատերում: Սակայն այս ալ> է փոփոխությունը ուշ շրջանի երևույթ է և զուգահեռությունը պատահական:

Առանձին բարբառների առիթով որոշ ուսումնասիրողներ երևույթը բացատրել են օտար լեզուների ազդեցությամբ, այսպես՝ Ղ. Աղայանը և ապա Հ. Աճառյանը Թբիլիսիի բարբառի հնչյունական դրությունը բացատրել են վրացերենի ազդեցությամբ: Հ. Աճառյանը, օրինակ՝ գրում է. «Թբիլիսի բարբառը գրեթե անփոփոխ պահած է հին հայերենի ձայնական հարստությունը: Բայց տսիկա վրացերեն լեզվի ազդեցությամբ կը պարտինք. այնպես որ բարբառին ձայներն ալ վրացական ձայներու արտասանության դրոշմը կը կրեն»⁵, ինչպես պ. կ. տ. ծ. և խուլերի կոկորդային հնչումը «զուտ վրացերեն փոխառություն մ' է», ֆ-ն չկա, «որովհետև վրացերենի մեջ ալ կը պակսի», այդպես և ա, ու. օ ձայնավորները:

Այս բացատրությունը համոզիչ չէ. եթե նույնիսկ բարբառիս խուլ պայթականների կոկորդային երանգը վրացերենի ազդեցությամբ լինի, դարձյալ նրա ձայնեղ պայթականները կապվում են Ազուլիսի, Մեղրիի և մյուս բարբառների հետ. ֆ-ն պատճառ չէ, ուստի ինչպես Թբիլիսիի, այնպես էլ հիշյալ բարբառները կապ չունեն վրացերենի հետ. ինչ մնում է ա. տ. օ ձայնավորներին, ապա սրանք չկան նաև ուրիշ շատ բարբառներում և ունեն իրենց բավարար բացատրությունը:

Թբիլիսիի բարբառը շատ կողմերով նման է Արզվիների բարբառին և սրա հետ միասին շարունակությունն է ինչ-որ մի այլ բարբառի, որի նախահայրենիքը դուրս է Վրաստանի սահմաններից: Ուրեմն այդ տարբերությունները ավելի ճիշտ կլինեն համարել զուտ բարբառային և ոչ թե կապել օտար ազդեցությունների հետ, մանավանդ, որ փոփոխությունները հետևողական ու օրինաչափ են: Եթե Թբիլիսիի բարբառի ձայնեղ պայթականները վրացերենի ազդեցությամբ բացատրվեն, ապա Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոտոսթոյի բարբառներում դրանց համապատասխանող շնչեղ խուլերը նույնպես որևէ հարևան լեզվի ազդեցությամբ պիտի բացատրվեն, այնինչ հայտնի է, որ ձայնեղների շնչեղ խաղցումը (հատկապես «արևմտահայ» արտասանության շնչեղ ձայնեղները) «իրենց պարունակած շունչին պատճառով (bh, gh, dh, jh)

5 Հ. Աճառյանի կարծիքով «Այս բոլորի մեջ կարելի էր պ. ք. վի ձայների փոխանակությունը վերագրել b, bh, ph ձայններին, բայց ավելի բանավոր է վերագրել բաղաձայնների հարմարեցման, ինչպես նաև խ. դ. և և. օ ձայները» («Արմատական բառարան», պղպալակ արտատի տակ):

6 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 52—53:

դեռ այսօր ալ որոշ թավութիւն կը ներկայացնեն, ունայեւ որ անվարժ ականջ մը զանոնք իբր թավ կը լսե... Ահա այս շունչն էր, որ քիչ մը ավելի գորանալով՝ նախորդ տարրը ավելի խուլացուց, որով առաջացավ թավ բաղաձայններու խումբը»:

Թե ինչով պետք է բացատրել ձայնեղների շնչեղացումն ու խլացումը բարբառների տարբեր խմբերում, առաջժմ դժվար է վճռական բան ասել, և մղվող վեճերն էլ մնում են ապարդյուն, որովհետև պատմական փոփոխութիւններից շատերը, այդ թվում և սրանց ակունքները, թաղված են շատ խորը, իսկ դրանք բացահայտելու միջոցները դեռևս շատ պրիմիտիվ են:

Եթե դժվար է բացատրել ձայնեղների շնչեղացումը կամ խլացումը մանավանդ բառասկզբում, ապա այդպես չէ շնչեղ խուլների շնչի կորուստը: Այս ուշագրավ երևույթը նույնպես չի բացատրվում օտար, օրինակ՝ ռուսերենի ազդեցութեամբ. ահա թե ինչ է գրում Հ. Առաձյանն այս մասին. «Երբ ես նկատեցի այս երևույթը, առաջին անգամ կարծեցի թե անհատական հատկութիւն է՝ արդյունք արտասանական թերութեան կամ ռուսական ազդեցութեան: Արդարև մեր մեջ էլ կան անձինք, թեև շատ սակավաթիվ, որոնք կրթված լինելով ռուսական դպրոցում, փ. ֆ. ք բաղաձայնները հնչում են պ. կ. տ: Բայց հետո մտածեցի թե ռուսախոսները 1) այս արտասանութիւնը մտցնում են ո՛չ միայն բառի մեջ, այլ նաև բառի սկիզբը, մինչդեռ այստեղ բառասկզբում պահվում է փ. ֆ. ք. ց, չ արտասանութիւնը. 2) ռուսախոսները ց, չ ձայնները չեն վերածում ծ, ճ. այլ ընդհակառակը հայերեն ծ, ճ հնչյուններն էլ դարձնում են ց, չ: մինչդեռ այստեղ բառասկզբում ց, չ մնում են անփոփոխ, իսկ բառամիջում ու բառավերջում դառնում են կանոնավոր կերպով ծ, ճ: Ի վերջո տեսա որ այս երևույթը հատուկ է ոչ միայն ռուսական դպրոցն անցած երիտասարդներին, այլև մանուկներին, ծերերին և անուս մարդկանց: Մինչև անգամ պատահեցի Ճանիկից նոր գաղթած (1910 թ.) մի ծերունու, որ ուներ դարձյալ նույն արտասանութիւնը:

Այստեղից հետեցրի, որ երևույթը ռուսերենից անկախ ձևացած արտասանական մի երևույթ է: Եվ որովհետև ես 1910 թվին Տրապիզոնում Մալաթիների, Ապիկոնցիների, Կիւլանացիների ու Ծոշարացիների մոտ և առհասարակ այդպիսի երևույթ չնկատեցի, և այժմ էլ չկա նույն երևույթը Տրապիզոնցի գաղթականների մոտ, ուստի պետք է եզրակացնել, որ այդ երևույթը հին է, բայց հատուկ է միայն Համշենցոց բարբառի Ճանիկյան ճյուղին»⁷: Այս երևույթը հատուկ է նաև Մոտկանի, Սասունի, Ալաշկերտի ու Մուշի գյուղախմբերին և ունի սրանց բոլորի համար մեկ ընդհանուր բացատրութիւն:

Ուրիշ բարբառներում շնչեղ խուլների խլացումը կամ շնչի կորուստը մասնավոր երևույթ է ու բացատրվում է առնմանութեան կամ տարնմանութեան օրենքներով, օրինակ շք>շս, քք>փտ կամ պտ և այլն:

Սակայն ինչու դր և ընդհանրապես դ-ով ու շնչեղ խուլով կազմված խմբերում գտնում ենք դդ կամ դտ, խտ, խդ և այլն, որն է փոփոխութեան պատճառը, որոշված չէ: Հ. Առաձյանը այս փոփոխութեան պատճառը համարում է դ>խ փոփոխութիւնը, որի ազդեցութեամբ էլ՝ ք>տ և նույնիսկ՝ ք>պ:

⁷ Հ. Առաձյան, Հաւ բարբառագիտութիւն, էջ 259

⁸ Հ. Առաձյան, Քննութիւն Համշենի բարբառի, էջ 77:

Մեղ թվում է ընդհանրապես. գիտենք, որ ք>պ փոփոխությունը նախորդել է կառկային լ-ից այժմյան առտասանության դ-ին անցնելու շրջանին, ուստի հին լե=լք պետք է տար լք=լպ և ապա չք=ղպ և նոր միայն խպ և սրանց համաբանությամբ ու առնմանության օրենքով՝ դփ> խպ, դք>խտ և այլն։ Այդ է հաստատում նաև զ>ս փոփոխությունը. այստեղ էլ հնչյունափոխության պատճառը կից ձայնեղ պայթականի խլացումն է՝ զզ>զկ>սկ։


Այսպիսով, պատմականորեն ձայնեղ պայթականների խլացումը նախորդում է ձայնեղ շփականների խլացմանը, մանավանդ, որ փոփոխությունը սկիզբ է առել բառասկզբում և ապա ընդգրկել մյուս դիրքերն ու պայմանները։ Այս եզրակացությունը հաստատում են նաև այն բարբառները, որոնք ձայնեղ պայթականները պահում են անփոփոխ (հմմտ. դր>դք, դձ>դծ, զզ>զզ և այլն). որովհետև սրանք ձայնեղ պայթականները պահում են անփոփոխ, ուստի և ձայնեղ շփականները չեն խլացնում (բացառություններն ունեն իրենց կոնկրետ ու որոշակի պատճառները)։ Ուրեմն զ>ս, դ>խ փոփոխությունները առնմանական են, իսկ զ>կ, ք>պ փոփոխությունները՝ պատմական, ուստի նախ ձայնեղները դառնում են խուլ և դրանց ազդեցությամբ շփականներն էլ դառնում են խուլ և ապա այս խուլերի ազդեցությամբ էլ շնչեղ խուլերը վեր են ածվում խուլերի՝ լդ>ղտ>խտ և լք>դք>խք։

Այն բարբառները, որոնք բառամիջում ու բառավերջում խուլ պայթականների փոխարեն ունեն ձայնեղ պայթականներ, հատկապես կախյալ պայմաններում՝ ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ պայթականները հնչում են անորոշ կամ թերաձայն (հմմտ. Տրապիզոնի բարբառում հրեշտակ>հոշդազ, տախտակ—դախդազ, պետք—բէթդը)։ Այս նշանակում է, որ բառասկզբում սկիզբ առած և կանոնավորված երևույթը կախյալ պայմաններում դեռևս իր ավարտին չի հասել ու դեռ տատանվում է տարբեր հնչումների միջև։

Այդ բարբառներում պայթականների խուլ հնչումը համեմատաբար ավելի շուտ կանոնավորվելու նշաններ ունի խուլ շփականների մոտ, քան ուրիշ պայմաններում և այդ պատճառով է, որ երբեմն շփականի կորուստից հետո հաջորդող խուլը ընկնում է բառասկիզբ ու մնում խուլ հնչմամբ, մի բան, որ շատ տարօրինակ է հենց այդ բարբառների համար (սրանք սովորաբար բառասկզբի խուլերը դարձնում են ձայնեղ. հմմտ. սկեսուր-կէսուր, սպանանել—պօննուշ, սկուտեղ—կտեղ և այլն, բոլորն էլ Համշենի բարբառում)։

Այս նշանակում է, որ շփականների կորուստը տեղի է ունեցել ավելի ուշ շրջանում՝ խուլ պայթականների ձայնեղացման օրենքը դադարելուց հետո, այլապես շփականից զրկված և բառասկիզբ ընկած խուլերը պետք է ենթարկվեին նույն օրենքին, ինչ գոյություն ունի բառասկզբի խուլ պայթականների փոփոխության համար։

Պայթականների մասին ասվածը կարելի է ամփոփել հետևյալ տախտակով.



Մի շարք բարբառներում α , β , γ բաղաձայնները դառնում են α' , β' , γ' այս փոփոխությունը սովորաբար տեղի է ունենում α , β , γ ձայնավորների ազդեցությամբ (մյուս բաղաձայնների փափկացումը հազվագյուտ և անսովոր երևույթ է, օրինակ՝ θ θ' փոփոխությունը, որը զիտե նաև գրական լեզուն նկատված ութին—ություն ածանցում, $\theta > \theta'$, $\eta > \eta'$, $\omicron > \omicron'$ տեղի է ունենում ի. ու ձայնավորներից առաջ և առանձին դեպքերում):

$\tau > \tau'$, $\kappa > \kappa'$, $\rho > \rho'$ փոփոխություններն ունեցող բարբառների համեմատությունը ցույց է տալիս, որ երևույթը համապատասխան դիրքերում ընդհանուր է եղել, սակայն ոչ բոլոր տեղերում է, որ հասել է կատարելության, Այսպես, բարբառների մի մասում՝ երևան, Գնձ. և այլն, α , β , γ լինում են α , β , γ ձայնավորներից առաջ, ուրիշներում այդ ձայնավորներից հետո, երրորդներում՝ զրանցից և՛ առաջ, և՛ հետո: Որոշ բարբառներում (Սուլավա և այլն) գտնում ենք քմային հնչման β , որը պատճառ է դառնում հաջորդ է ձայնավորի երկրաբարբառային հնչման համար, այլ խոսքով՝ է ձայնավորի ազդեցությամբ β -ն ստանում է քմային հնչում և պատճառ դառնում է-ի երկրաբարբառայնացման՝ ի՛ է հնչման համար: Կան բարբառներ էլ, որոնք ունեն սովորական գործածության η , ρ' բայց չունեն η' :

Ուրեմն, α , β , γ -ի քմայնացման մեջ էլ բարբառները տարբերվում են. Կարճևանի բարբառում ի-ից հետո β -ն դառնում β' , իսկ է-ից հետո մնում է մաքուր β , Վանի բարբառում առաջնային շարքի ա, օ, ու-ից հետո η , τ -ն դառնում են η' , τ' , իսկ β -ն պահվում է մաքուր հնչմամբ՝ β : Եթե Կարճևանի բարբառում ի-ն թեթև ձայնավոր է և ազդում է β -ի վրա, ապա է-ն էլ այնքան ծանր չէ, իսկ Վանի բարբառում երևույթը բացատրվում է հենց β -ի պատճառով:

Մի քանի բարբառներում $\eta > \eta'$, $\kappa > \kappa'$, $\rho > \rho'$ ամփոփվելով ստացվում է ρ' , որը և դառնում է κ' , γ : Կամ γ , իսկ ուրիշներում Աշտարակ, Նորատուս և այլն, ետնալեզվային պայթականների դառնում են միջնալեզվային՝ $\eta > \eta' > \gamma$,

$l > l' > n$, $p > p' > z^9$ առաջնային շարքի է, ի. և ձայնավորներից առաջ ու նրանց ազդեցությամբ:

Այս երևույթը հիշեցնում է հնիւ. ցո-օ փոփոխությունը, որը տեղի էր ունենում դարձյալ է, ի ձայնավորներից առաջ և հայտնի է «Մեյեի օրենք» անունով (հմմտ. ջեր, ջերմ, ջիղ/ջիլ և այլն):

Դիտողություն — Այս օրենքով է, որ բառակազմի շշականի ազդեցությամբ բառասկզբի քմայինը փոխվում է կոկորդայինով. բարբառներում դրա համար կան օրինակներ. ջրաղացք—ջաղացք—ջաղաշք—խաղաշք¹⁰ —Ասլ. շրջոնք «մի բանի հակառակ կողմը» > շրթկ'ոնք—Վն. շեղշ—շեղք¹¹—Վն. չորեքշաբթի—ք'օրօպաթ, ք'օրօք'ըշպաթ—Վն.):

Ձ, ծ, ց և օ, ն, չ բաղաձայնները որևէ բաղաձայնից առաջ պարզում են: Այս երևույթը շատ սովորական է հատկապես փոքրասիական կամ բաղմավանկ բառերի միջին վաճկի ձայնավորը սղող բարբառներում. միջին վանկի ձայնավորի սղմամբ հիշյալ բաղաձայններն ընկնում են մեկ ուրիշ բաղաձայնից առաջ և կորցնում են ատամնայինը ու մնում զ, ս, ժ, շ. այս փոփոխությունը շատ սովորական է Մրդ. Ասլ. բարբառներում, որովհետև երևույթը տեղի է ունենում ոչ միայն բառարմատներում, ինչպես Պոլսում է, այլև բառակապակցությունների մեջ (հմմտ. մեծ մարդ—մրզ մարթ—Ասլ. վեց տղայ—վէ'ս դրղա—Ասլ. տաճկանալ—դաժդրնալ—Ասլ.):

Այս փոփոխությունից հետո, երբ հիշյալ բաղաձայններն ընկնում են անհամապատասխան աստիճանի բաղաձայնների մոտ, ենթարկվում են մի նոր փոփոխության՝ առնմանության օրենքով հարմարվելով վերջիններիս աստիճանին (հմմտ. կարճ քիթ—գարշ քիթ—Ասլ. ասածս է—ըսասս է—Ասլ.):

Հիշյալ փոփոխություններից զ, ժ լինում են ձայնեղի մոտ, իսկ ս, շ՝ խուլերի մոտ (հմմտ. վարձք—վարսկը, սինձն—սըէզնը, մէջք—մէշկ, միշկ, դաղձն—տէզնը, տէստնը, տախսնը, տախսը, խուրձն—խօշնը, խօռտնը, խօթնը, խօհ'նը: Բայց այս օրենքն էլ բացարձակ չէ, որովհետև շատ բարբառներում գտնում ենք դրան հակառակ օրինակներ. (հմմտ. անցանել—անցնիլ—ասնիլ, ճանաշել—ճանշնալ—ճաշնալ, կոճակել—կոճկել—կօժկէլ և այլն):

Գրաբարում ձայնեղ պայթականները երբեմն վերածվում են համապատասխան խուլերի, իսկ խուլերն էլ ընդայինից հետո՝ ձայնեղների: Ընդհան-

9 Այս երևույթը հիշյալ խոսվածքներում պատմական է. Հ. Աճառյանի վկայությամբ Մարաղայի բարբառում նոր է միայն սկիզբ առնում. «...միջին և նոր սերունդի մեջ... շատերը... արդեն հնչում են ջ, ն, շ, միևնույն ընտանիքում երկու հնչումն էլ կա: Շատ հետաքրքրական է դիտել նոր սկսվող ձայնաբանական երևույթի ընթացքը: Տեղացիք ձայնափոխությունը նկատում են և այդպես հնչողներին պակասավոր կամ լեզուն քաղցր են համարում: Բայց նրանք ուրիշ ոչ մի կետում պակասավոր հնչում չունին. խոսողներն էլ իրենց կարգին երևի զիտեն իրենց լեզվական դրությունը, որովհետև թեև սովորական խոսակցության ժամանակ զործ են անում քմական հնչումը, բայց հենց որ նկատողություն է լինում մյուսների կողմից՝ աշխատում են փոխել և նմանեցնել սովորական հնչումին» («Քննություն Մարաղայի բարբառի», էջ 21—22):

10 Հ. Աճառյանը («Քննություն Վանի բարբառի», էջ 80) նկատում է, որ այս լաղաշք ձևի նախաձայն ք-ն ստացվել է $z > \gamma$ -ից՝ բառամիջի շ-ի ազդեցությամբ՝ տարնմանության օրենքով և ոչ թե $z > \gamma' > \gamma$ ՝ առնմանությամբ վերջաձայն շ-ի:

11 Այս մասին Հ. Աճառյանը գրում է, թե հնչյունափոխությունը անսովոր է և ոչ հնչյունափոխական, «ոչ մի ուրիշ բարբառում չկա և շփոթված պետք է համարել հոգնակի ք վերջավորության հետ» («Քննություն Վանի բարբառի», էջ 83):

վում, ապա նրանցից մեկը բնկնում է (հմմտ. հօնէցա «հոգնեցի», բաղանկր «բաղարներ», մանկր «մատներ», բոլորն էլ Ատափագարում),

բ. Որոշ բարբառներում ու պլյուս պայթական խմբում ն-ն բնկնում է (հմմտ. անցանել—ասնիլ—Ասլ, Պլ. թանձր—թօրղր—Ասլ. ճանձ մը—ջաժ մը—Ասլ. թնձկալ—թղղալ—Պլ.): Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ն-ի անկումը զարգացել է պայթականի պարզեցումից հետո (հմմտ. Համշենի անցանել > օնցնուշ > օնսնուշ, օսնու, պղինձ > րղինձ, հոգն. բղինղնի, աղանջ > օնգօջ, հոգն. օնգօժնի, կապոց—ղաբօց, հոգն. գաբօսնի և այլն)՝ նց. ոշ > ոս, նշ և ապա՝ ս, շ:

գ. Բ, վ, դ, ք, ֆ չնչվում են կից բաղաձայնից առաջ, որովհետև դժվար արտասանելի են դրանք¹³. այդպես են տֆ, ոֆ, րդ, նկ, ծն, գն, կվ, ցա, հց, կմ, գբ և այլն:

դ. Անկման օրենքը ավելի շատ տարածվում է ր-ի վրա, որը սովորաբար բնկնում է ժ, շ և ճ բաղաձայններից առաջ:

Փոխազդեցական հնչյունափոխության ձևերից մեկը բարդ բաղաձայնների պարզեցումն է: Ինչ ձ—դ—զ, ձ—դհ—զ, չ—դ—ժ, չ—դհ—ժ, չ—տ—ս, ձ—տ—շ, ց—թ (տհ)—ս, շ—թ (տհ) —շ:

Այս երևույթը հին հայերենում բառաստեղծական միջոց էր (հմմտ. ծորել—թորել և սորել. ծածանել—տատանել և սասանել, արած—արօտ, ամաշ—ամօթ). ինչպես գրաբարում, այնպես էլ բարբառներում բարդ բաղաձայնները պարզում են կից բաղաձայնների մոտ, սովորաբար կորչում է ատամնային տարրը՝ կրկին շնչի խնայողության օրենքով: Որոշ տեղերում երևույթը ավելի առաջ է գնում և բարդ բաղաձայնից ստացված պարզ հնչյունը կից բաղաձայնի որակի համեմատ փոփոխվում է, այսպես՝ ձ > զ, չ > ժ. այս զ, ժ կից խուլ բաղաձայնի ազդեցությամբ դառնում են ս, շ (օ > ս, որն ընկնելով ձայնեղ բաղաձայնի մոտ դառնում է գ):

Սրա հակառակ երևույթը առաջնայնական պայթական ու շփական բաղաձայնների բարդացումն է. ինչ. րշ > շ՝ թշուառ—շվառ, տ—ս > ց՝ ութսուն—ուծղուն, արտասուք—արցունք, դ-ժ > ջ՝ պատժել—պաշել—բաջջել, դժգոհել—ջուշկուհալ, պն-վն՝ ամուհնվանի—ամփովանի, սեպհական—սեփական, վն > ֆ՝ բովհրել—բորֆել: Բարդացման ձևերից մեկն էլ մասնակի առնամանությունն է, երբ պարզ շփականը կից խուլ շփականի ազդեցությամբ դառնում է բարդ բաղաձայն (սց՝ քան գ > քանս—քանց, զկեռ > սկեռ > սքեռ—ցրքէռնր, սծ՝ կալամաս—կալամած, զծ՝ գմուռս—ձումուռ):

Բաղաձայնների փոխազդեցական փոփոխության ձևերից մեկն էլ պարզ բաղաձայնների թանձրացումը կամ թավացումն է, երբ՝ շրթնատամնային շփական ձայնեղ վ-ն կորցնում է իր ձայնեղությունը և դառնում շրթնատամնային շփական խուլ ֆ, կամ երկշրթնային շնչեղ խուլ վի-ն միանալով վ-ին, տալիս է նույնպես ֆ, որովհետև վերանում է վ-ի ձայնեղությունը և վի-ն էլ անցնում է շրթնատամնային վիճակի:

¹³ Միայն Ասլանբեկում բաղաձայնի անկումը ուղեկցվում է «շունչի հանկարծական բեղ-ատումով և կոկորդի սեղմումով», որը ինչպես Հ. Աճառյանն է ասում «խիտ հետաքրքիր է ընդհանուր ձայնախոսության տեսակետով և կը ցուցնե թե բաղաձայնները իսպառ կորսվելն առաջ ի՛նչ ճամբով կ'անցնին» («Հայ բարբառագիտություն», էջ 243):

Հայերենի բարբառները բաղաձայնների կրկնություն չեն սիրում, բայց կան բարբառներ, որոնց համար բաղաձայնների կրկնությունը խորթ չէ, օրինակ՝ Տիգրանակերտում, կան բարբառներ էլ, որոնք չնայած մերժում են կրկնությունը, բայց ունեն առանձին բաղաձայնների կրկնության օրինակներ: Բարբառները գործադրել են մի շարք միջոցներ, այսպես՝ հնից եկող և ձայնավորների սղմամբ ստացվող կրկնակ բաղաձայնների, իբրև խճողված ձևերի միջև, ավելացնում են ը (թթու-թրթու, ծծել-ծրծել, փաթաթել-փաթըթել, փաթել, սպտուր-սպտրտուր-պըտըտուր, հովիւ, սեւ. հովըվու, խօվըվով), ջնջում են կրկնակներից մեկը (յիսուն-նոց > հիսունոց, քսան-նոց > կսանոց), որևէ ձայնավորով անջատում են (հնանալ-հինընալ, խնանալ), ձևայիններից մեկը փոխում է մեկ ուրիշով (շուշան, հոգն. շուշալտեր—Վն., ախուն, հոգն. անվըներ—Վն.) և այլն:

Բաղաձայնների փոխադրեցության դրսևորումներից մեկն էլ առնմանությունն է, որը շատ սովորական է բարբառներում: Այս երևույթն ունի թե հնչյունաբանական և թե ձևաբանական արժեք: Նախ՝ բառամասերից մեկը կամ հնչյունակումպլեքսը համարվում է մեկ ուրիշ, օրինակ՝ հոկտեմբեր և դեկտեմբեր ամսանունների նմանակությամբ սեպտեմբեր ամսանվան պ-ն փոխարինվում է կ-ով, ավելի ճիշտ -պտեմբեր մասը փոխարինվում է կտեմբեր-ով կամ փետրվար-ի ազդեցությամբ հունվար-ը ստանում է ր՝ հունրվար. մեղր և յեղ բառերն ունեն եղ ընդհանուր մաս, առաջինի ազդեցությամբ երկրորդն ստանում է ր՝ յէղր-մեղր կամ սույն բաղադրիչի նույնության պատճառով ուրսուն թվականը հարմարվում է յոթանասուն-ին և դառնում ուրանասուն: Արանց բոլորի մեջ էլ դեր են խաղում ձևայինները, ուստի և առնմանությունը ձևաբանական է:

Հաճախ է պատահում, որ նույն բառի մեջ ազդվող հնչյունը մեկ նմանվում է նախորդ, մեկ էլ հաջորդ հնչյունին և ենթադրվում բազմապիսի փոփոխությունների. այսպես՝ ծննդյան բառը Ագուլիսում չորս ձև է ստանում. կրկնակ ն-երից մեկի անկմամբ ստացված ձևում կ-ի ազդեցությամբ դ-ն դառնում է տ՝ ծրնրտկուն, այս տ-ն էլ ազդվելով ծ-ից նույնանում է ծ-ի հետ՝ ծրնրծկուն, այս ռ-ն էլ կ-ի պատճառով դառնում է ս՝ ծրնրսկուն կամ էլ կ-ի առնմանությամբ զ > ս-ն դառնում է ք՝ ծրնրքկուն:

Պատահում է նաև, որ ազդող հնչյունը ինքն էլ ընկնում մեկ ուրիշի ազդեցության տակ ու հարմարվում նրան: Ինչպես երևում է, բառակազմի հնչյունները գտնվում են խաչաձև ու բարդ հարաբերությունների մեջ և առնմանությունը շատ մեծ դեր է կատարում բառի հնչյունական կառուցվածքի, ընդհանրապես բառապատկերի ձևավորման գործում:

Նկատված է, որ հայերենում ս-ին հաջորդում է խուլ բաղաձայն, իսկ գ-ին՝ ձայնեղ. բարբառներում գերակշռում է հնչյունների առնմանությունը, բայց դա հիմնականում պատմական և մասամբ միայն փոխադրեցական հնչյունափոխությամբ է. բարբառների այն խումբը, որը բառասկզբում խուլ պայթականներ չունի և այն խումբը, որը նույն դիրքում ձայնեղ չունի, ներկայացնում են ուղղմանական հարաբերություն, իսկ բառաստիճան ու եռաստիճան պայթականների համակարգ ունեցող բարբառները առնմանական հարաբերության ցայտուն դրսևորում չեն ներկայացնում:

Սակայն այդ հարաբերությունները կարող են փոփոխվել թե բարբառի պարզադաման ընդհանուր միատուփներին համապատասխան և թե ըստ ժամանակաշրջանների, օրինակ, եթե այսինչ բարբառում այսինչ ժամանակ սովորական է մի առնամանակյա կապակցությունը, ապա նույն բարբառում մեկ ուրիշ ժամանակ կարող է սովորական դառնալ նրա տարնամանակյա կապակցությունը, ահա մի օրինակ՝ խեղդել բառում խ, դ, դ բաղաձայնները զառնազան օրենքներով մտնում են նորանոր հարաբերությունների մեջ. իսկ տարնամանակով դ-ից դառնում է ո՝ հեղդել, դ > ք պատմական փոփոխությամբ ստացված հեղթել ձևում դ-ն հարմարվում է ք-ին և ստացվում է հեթթել, այստեղ էլ կրկին շնչի խնայողությամբ ք-ն դառնում է տ՝ հեխտել, լս-ի ազդեցությամբ հ-ն դառնում է խ՝ խեխտել. այսինքն՝ տեղի է ունենում պատմական փոփոխություն, ապա՝ ետրնթաց տարնամանություն, հետո՝ ետրնթաց նույնացում:

Առնամանության հակառակ երևույթը տարնամանությունն է:

Տարնամանվել կարող են բոլոր հնչյունները, ձայնեղները ձայնեղներից ազդվելով դառնում են խուլ, իսկները խուլներից ազդվելով դառնում են ձայնեղ. այս օրենքով է, որ որոշ բարբառներում բառասկզբի շեշտված ո-ն հաջորդ վ-ի պատճառով շի դառնում վօ (հմմտ. ուլ > օւլ և ուլ), այսպես սպասելի էր վօվ, ինչպես որ գտնում ենք ուրիշ բարբառներում: Հաճախ է պատահում, որ տարնամանությունը տեղի է ունենում փոխազդեցական կամ օրինաչափ փոփոխությանը զուգընթաց. դեպքեր կան, որոնց մեջ առնամանության հետևանքով սկիզբ է առնում տարնամանական փոփոխություն և ընդհակառակն, կան էլ, որ հնչյունների զրափոխությամբ առաջ են գալիս այնպիսի դասավորություններ, որոնք տարնամանական և այլ փոփոխությունների պատճառ են դառնում:

Սերտորեն կապված յինելով հնչյունափոխության ուրիշ օրենքների ու պայմանների հետ, տարնամանությունը հանդես է գալիս մերթ որպես պատճառ դրանց համար, մերթ էլ որպես հետևանք, այսպես՝ շուրջառ բառը նոր նախիջվանի բարբառում երկու ձևով է՝ սուռչար և սուռչալ. սրանցից սուռչար ստացվել է շ-ս փոփոխությամբ՝ բառակազմի շ-ի տարնամանությամբ և ապա՝ ր, ո բաղաձայնների թրթռումների փոխանակմամբ դարձել է սուռչար, որը և կրկին տարնամանությամբ, մանավանդ վերջնահնչյուն ո-ի թրթռումների թուլացմամբ դարձել է սուռչար: Սուռչալ ձևն առաջինթաց առնամանությամբ դարձել է սուռչառ և ապա՝ տարնամանությամբ՝ սուռչալ:

Ինչպես երևում է, նույն բառը տարբեր պայմաններում հանգում է մեկ մի, մեկ էլ ուրիշ ձևերի, նայած թե փոփոխությունները դեպի ուր են զարգանում: Ենթադրաբար որոշ բարբառներում ստացել է կնդիչ ձևը՝ հ-ը հնչյունների դրափոխությամբ՝ կնրիհ, ապա՝ խուլների առնամանությամբ՝ կնտիհ. հետո տարնամանությամբ՝ կնտիչ և վերջապես ռնգայինից հետո խուլների ձայնեղացման օրենքով՝ կնդիչ:

Տարնամանության դեպքերը միջոց կարող են ծառայել տարբեր բարբառներում հնչյունական օրենքների զարգացման ընթացքն ու ժամանակը որոշելու համար, այսպես՝ խ, դ, դ հնչյունախումբը միևնույն բառում ծանր է արտասանության համար, բայց բարբառները ձգտում են թեթևացնել այն՝ լս-ն դ-ի տարնամանությամբ դարձնելով ո, իսկ վ-երից մեկն էլ՝ վ¹⁴:

14 Հմմտ. Հ. Աճառյան, Քննություն նոր Զուղայի բարբառի, էջ 122:

Փոխազդեցական փոփոխություններից մեկն էլ հնչյունների դրափոխությունն է, որը երկու հիմնական պատճառ ունի. նախ՝ տվյալ բարբառում հնչյունների ընդունված ու սովորական հերթափոխությունը (հմմտ. գրբ. շխ և բարբառային խշ) և երկրորդ, որը ամենասովորականն է, բառի հնչյուններից մեկի արտասանական մտապատկերի շուրջ կամ ուշ զարթնելն ու ոչ իրեն հատկացված տեղում իրացվելը: Հաճախ է պատահում, որ արտասանական մտապատկերի մեջ շուտ զարթնող և նախքան իրեն հասկացված տեղում իրացվող հնչյունի խափուր տեղը բռնում է այն հնչյունը, որի մտապատկերը ուշացել է:

Դրափոխության երկրորդական պատճառներից կարելի է նշել արտաքին ազդեցությունը, երբ ուրիշ բառի որոշ հնչյունախմբի նմանողությամբ տվյալ բառի նման հնչյունախմբը ընդունում է համապատասխան հերթադաշտություն (հմմտ. սոխ-խստոր > սոխ-սխտոր): Հնչյունների դրափոխության պատճառը միշտ զուգորդված է լինում հնչյունի որակի հետ, այսպես՝ պայթականների արտասանական մտապատկերը, ինչպես երևում է համապատասխան օրինակներից, այնքան ուշ կամ շուտ չի զարթնում, քան ձայնորդներինը և թվում է, թե դրափոխությունն ավելի հասուի է ձայնորդներին, քան պայթականներին:

Հնչյունների դրափոխությունը հաճախ պատճառ է դառնում նորանոր փոփոխությունների համար. վերանում է բաղաձայնների խճողումը կամ ընդհակառակն՝ ստեղծվում է խճուղում, որը և զանազան միջոցներով թեթևացվում է. փոխվում՝ ավելանում կամ պակասում է բառի վանկերի թիվն ու նրանց սովորական դասավորությունը, վերանում են մասնավոր օրենքների բացառությունները, տեղի է ունենում հնչյունների անկում, առնմանություն, տարնմանություն և այլն: Այսպես, օրինակ՝ լպրծտել բառում Բ-ի դրափոխությամբ ստացվում է իրար հաջորդող Լ-երք խուլ պայթականների խումբ՝ լպլծտալ, որը շատ անհարմար է արտասանության համար, ուստի Ծ-ն սլարդում է՝ լպլտալ, որտեղ կից խուլերի տարնմանությամբ ս-ն դառնում է զ լպզտալ, կամ, օրինակ՝ ռաւաւել բառում Բ-ի դրափոխությամբ վանկերի թիվը մեկով պակասում է՝ ւաւաւել՝ միջին ձայնավորի սղման օրենքով եռավանկ բառը դառնում է երկվանկ:

Դրափոխությունը միևնույն ժամանակ կարևոր միջոց է հնչյունափոխության ընթացքը պարզելու համար, այսպես՝ բովևել բառում վի խմբի ձուլմամբ և Բ-ի դրափոխությամբ ստացվում է բօբֆել, ուրեմն վի > ֆ փոփոխությունն ավելի հին է, քան Բ-ի տեղափոխությունը. պղտոբ բառը որոշ տեղերում դառնում է պղտուղ, որն ստացվում է նախ՝ Բ-ը տեղափոխությամբ և ապա՝ տ-ի մոտ Բ > Վ փոփոխությամբ. եթե Բ-ը դրափոխությունն ավելի ուշ լիներ, ապա Վ-ն խուլերի մոտ ըստ օրենի պիտի դառնար խ՝ պլտոբ, ինչպես որ գտնում ենք ուրիշ բարբառներում. դրափոխությամբ խ-ն պիտի մնար անփոփոխ պլտուխ. Բ-ն էլ չպիտի դառնար Վ, եթե չլիներ խուլից առաջ. ուրեմն դրափոխությունն ավելի հին է, քան Բ > Վ:

Բառակազմի փոփոխություն կատարվում է նաև հնչյունների հավելմամբ. հնչյունակազմին ավելանալ կարող են թե ձայնավորները՝ սովորաբար ներառնականության օրենքով և թե բաղաձայնները: Բաղաձայնների հավելումը տեղի է ունենում մի շարք պատճառներով. այսպես՝ որպես շատ թեթև ձևեր միավանկ բառերը սղումներից ու կրճատումներից կանխելու և ամրակայելու համար ստանում են նոր հնչյուններ (հմմտ. վեց-վէցը, նիդ-նինդ, լինդ, լինին-լինինք), որակով նույն կամ նման հնչյունների միջև արտասանական կտալ

ստեղծելու համար (ինչ. ա, դ-ի հավելումը նր խմբում, ք-ի հավելումը մե խմբում), կոնտամինացիայի կարգով (ինչ. կատու-ի > կատուվի, կատույի. տրքառվին > արքայություն, արքավութին), համաբանությամբ (օրինակ՝ ցած-ցածր՝ նմանակությամբ լարն հականիշի, ուղեմ-ուղենամ, գիտեմ-գիտենամ, ունեմ-ունենամ՝ նմանողությամբ մերձիմ-մերձենամ, մօտիմ-մօտենամ բայերի), նախասությունամբ, հարասությունամբ և այլն:

Հավելում կատարվում է նաև արտասանական օրգանների աշխատանքի շնորհիվ, այսպես՝ շատ սովորական է հ-ի հավելումը ձայնավորով սկսվող բառերում, երբ ձայնալարերն ավելի ուշ են սկսում թրթռալ և արտամղվող օդը տալիս է շունչ, ապա բառասկզբում ավելանում է հ, իսկ եթե բառն սկսվում է բաղաձայնով, ապա նույն պատճառով վերջինս շնչեղանում է: Այդ է պատճառը, որ որոշ բարբառներում բառասկզբի ձայնավորներն արտասանվում են ձայնեղ շնչունով, իսկ ուրիշներում՝ խուլ շնչունով. ձայնեղ և շունչն ունեն այն բարբառները, որոնք բառասկզբում ունեն շնչեղ ձայնեղ պայթականներ, իսկ խուլ և ունեն մյուս բարբառները:

Հավելումը լինում է երկու տեսակ՝ նախասություն¹⁵ և հարասություն: Երբ հնչյունի արտասանական մտապատկերը շուտ է զարթնում և իրացվում է թե իր տեղում և թե նախորդող վանկում, ապա տեղի է ունենում նախասություն (հմտ. ոտիկ-տօտիկ, սպտուր-սըպլրտուր, ործկալ-կօրծկալ):

Մեր ունեցած օրինակներում այս երևույթին ավելի շատ ենթարկվում են և, մասամբ ր և հատուկենտ օրինակներում ուրիշ հնչյուններ. նախասության պատճառ կարող են դառնալ տարնմանությունը (ոչինչ-ոնչիչ-նոնչիչ-մոնչիչ (նչ.), հավելումը և տարնմանությունը (ածելի-ալծելի-արծօլու (Մրդ.), արծրլի (Վն.), լիակատար առնմանությունը (շլինք-շնլինք > շլլինք (Պլ.) և այլն:

Հարասությամբ հնչյունն իր տեղում արտասանվելուց հետո էլ մտապատկերը շարունակվում է և իրացվում հաջորդ վանկում. սա նախասության հակառակ երևույթն է և տարածվում է ր, ա, մասամբ էլ ւ-ի վրա: Հարասությունը իր ընդգրկած օրինակների մեջ կայուն է ու պահվում է ածանցավոր, բարդ ու թեք ձևերում:

Բառապատկերի փոփոխության ձևերից մեկն էլ բաղաձայնների անկումն է, որի հիմնական պատճառը նրանց խճողումն է: Բաղաձայնների խճողումը բարբառներում վերացվում է կամ վանկերի թիվը և-ով ավելացնելու, ուրեմն և բաղաձայններն իրարից անջատելու միջոցով կամ էլ կուտակվող բաղաձայններից մեկնումեկի կրճատումով (հմտ. սպտուր-սըպտուր, սըպլրտուր և պլրտուր, սպիտակ-սիպտակ, քսպիտակ և բիդագ, քաղցր-քաղժըր և քաղսը. քարսը. ծանր-ծանդր-ծանդրը. ձանդր, և ձայնը, ձայը, ձարը, պաշտպան-պաշպան):

Որոշ բարբառներում՝ Ատփ. Ասլ. և այլն, բառամիջում տանելի չեն ց. կ. ք. ր. և այլու բաղաձայն խմբերը, ուստի և ջնջվում են (հմտ. ութսուն-ուձուն, մաներ «մատներ», հօնեցա «հոգնեցա»): Առանձին բարբառներում կրճատվել կարող է նաև իրար մոտ եկող նույն որակի բաղաձայններից մեկը (այն միամիտ, ալն նման-անման-ամուն, բան մի-պումը):

¹⁵ Որոշ մասնագետներ այս երևույթը համարում են դրափոխություն, որը հիշտ չէ, իսկ ոմանք էլ՝ անտիցիպացիա, որը շնայած հիշտ է, բայց հայերեն չէ:

Առանձնահատուկ է Վ-ի կրճատումը, որը, որպես մի թեթև շունչ, հեշտությամբ ընկնում է հատկապես Ե-ից հետո և բառասկզբում՝ ձայնավորից առաջ, երբ արտասանության պահին ձայնալարերը ուժեղ կերպով տատանվում են և վերացվում է կոկորդի շփման մոմենտը:

Յուրահատուկ է նաև որոշ ոչ բազմավանկ բառաձևերի հնչյունների կրճատումը (հմտ. թող-թօ, թր, պիտի-պի, տի, տ, պ). դա բացատրվում է նրանց շատ հաճախական գործածությամբ:

Բաղաձայնների սնկման ավելի շատ ենթարկվում են Ե, Ս, Բ, Ա, Ո, Պ, Մ, Գ, Կ, Ը բաղաձայնները:

Բառապատկերի խիստ փոփոխման ձևերից մեկը ամփոփումն է¹⁶, որին ենթարկվում են այն երկարաշունչ բառերը, որոնց կազմում կան նույն կամ նման երկու վանկեր. դրանով թեթևացվում է բառի արտասանությունը, վերացվում է բաղաձայնների խճողումը: Ամփոփումը կատարվում է ստուգաբանության կամ միասնության օրենքներով (աստուածածնայ-ասվածա, ծիծեռնակ-ծոնիկ, ծածկել-ծկել, ինչու համար-չումար, ընդ այս-դես, արարմունք-արմունք, մի քիչ-մէշ):

Հնչյունափոխության բազմաթիվ դեպքեր կան, որոնք բացատրվում են արտաքին ազդեցությամբ, ժողովրդական իմաստավորմամբ, խաչաձևմամբ և այլն. որոնց վրա կանգ չենք առնում տեղի սղության պատճառով:

Հապավումների բանալի

Սգլ. — Ագուլիս	Խրբ. — Խարբերդ	Շմշ. — Շամշադին
Ալշ. — Ալաշկերտ	Կռ. — Կոզեն	Շպր. — Շապին
Առտ. — Առտիալ	Կս. — Կեսարիա	Գարահիսար
Ասլ. — Ասլանբեկ	Կր. — Կարին	Շտ. — Շատախ
Արբ. — Արաբկիր	Կրձ. — Կարճևան	Չլթ. — Չալթր
Արթվ. — Արթվին	Հգր. — Հագրութ	Պլ. — Պոլիս
Արշ. — Արեշ	Հզզ. — Հազզո	Ռոտ. — Ռոտոսթո
Բլ. — Բալու	Հճ. — Հաճն	Սբ. — Սեբաստիա
Բլդ. — Բալադետ	Հմշ. — Համշեն	Սիրվ. — Սիրվիհիսար
Գնձ. — Գանձակ	Ղրբ. — Ղարաբաղ	Սլ. — Սոլոդ
Գր. — Գորիս	Ղրդ. — Ղարադաղ	Սլմ. — Սալմաստ
Դրս. — Դերսիմ	Մկ. — Մոկս	Սչ. — Սուչավա
Եդ. — Եդեսիա	Մդր. — Մեդրի	Սս. — Սասուն
Երև. — Երևան	Մշ. — Մուշ	Սվ. — Սվեդիա
Ջթ. — Ջելթուն	Մրդ. — Մարադա	Վն. — Վան
Թբլ. — Թբիլիսի	Մրշ. — Մարաշ	Տդ. — Տիգրանակերտ
Թրթ. — Թուրքերեն	Նխջ. — Նոր Նախիջևան	Ուրմ. — Մարմիա
Լհ. — Լեհահայ	Նդ. — Նոր Ջուղա	
Խտրջ. — Խոտրջուր	Շմ. — Շամախի	

¹⁶ Ոմանք այս երևույթը համարում են հնչյունների ձուլման, ոմանք էլ՝ տարեմանության, օրինակներ էլ՝ արտակարգ փոփոխության դրսևորում: Հմտ. էդ. Աղաջան, Լեզվաբանության երաժույթուն, Երևան, 1952, էջ 160: Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հատ. 1, Երևան, 1939, էջ 104: Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Երևան, 1955, էջ 145: Մարուդո, Լեզվաբանական տերմինների բառարան (ռուս.), էջ 66: